

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Աստուծոյ
խոստումը
Աբրահամին



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Adapted by: M. Maillot; Tammy S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.


Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.





Ջրհեղեղէն երկար
ժամանակ ետք,
աշխարհի
ժողովուրդը
ծրագիր մը դրաւ:



"Յգօր քաղաք մը պիտի
շինենք բարձր աշտարակով,
որ երկինք կը հասնի", ըսին
անոնք. "Թող որ բոլորս
միասին ապրինք": Ամենքն ալ
սոյն լեզուն կը խօսէին:



Աստուած կ'ուզէր, որ մարդիկ ապրին ամբողջ
աշխարհին վրայ, որ ինք ստեղծեց: Ասոր
համար ալ Ան հրաշալի բան մը ըրաւ:
Յանկարծ, ժողովուրդը տարբեր
խումբերու բաժնուեցաւ եւ
սկսաւ այլազան լեզուներ
խօսիլ: Աստուած

անոնց
տուաւ
նոր
լեզուներ:




Անոք, որոնք նոյն լեզուն կը խօսէին իրար հետ
գացին: Թերեւս ժողովուրդը վախցաւ անոնցմէ,
որ նոյն լեզունէն չէին հասկնար:




Այս ձեռով Աստուած պարտադրեց ժողովուրդը, որ
լեցնեն տարբեր երկիրներ: Այդ քաղաքը, որ անոնք
ձգեցին Բաբելոն կը կոչուէր, որ շուարածուլթիւն
կը կոչուի:



Տարիներ ետք:
Ur of the chaldees
Կոչուող շրջանի մեջ
Աստուած խօսեցաւ
մարդու մը, որ կը
կոչուէր Աբրահամ:
"Ձգէ այս հողը"
հրամայեց
Աստուած
"Գնա այն
հողը զոր
ես քեզի
ցոյց
պիտի
տամ":



Աբրահամ հնազանդեցաւ: Աստուած զինք
առաջնորդեց դէպի Բանաան: Իր կինը Սարան
եւ եղբորորդի Լիդը հետը ընկերակցեցան:



Քանաանի մէջ Աբրահամ եւ Լոդը
հարստացան: Անոնք բազմաթիւ
ոչխարի հոտեր ունեցան: Բաւական
արծարծուելիք վայրեր չկային այդ
մեծ թիւով անասուններուն:



Լոդին հովիւները կը վիճէին
Աբրահամ հովիւներուն հետ:
"Թող որ խնդիր չ'ըլլար", ըսաւ
Աբրահամ: "Պիտի բաժնուինք",
Աբրահամ Լոդի ըսաւ, "Դուն
զատէ այն հողը, որ կ'ուզես":



Լող հսկայ կանաչ տարածութիւն մը
զատեց, որ լեցուն էր քաղաքներով
եւ գիւղերով: Շատ ազատ
կ'երեւար: Սակայն քաղաքները
շատ չար տեղեր էին:



Լողի երթալէն ետք,
Աստուած անգամ մը եւս
խօսեցաւ Աբրահամին "Ես
քեզի պիտի տամ Քանաանի
բոլոր հողերը յաւիտեան":





Աբրահամ եւ Սառա
զաւակներ չունէին:
Ի՞նչպէս կրնայ Աստուած
իր այս մեծ խոստումը
պահել:





Երեք մարդիկ եկան Աստուծոյ քովէն
Աբրահամին եւ Սառային մօտ:






"Մօտ օրԷն զաւակ պիտի ունենաս", ըսին անոնք:
Սառան ինդաց: Ան չհաւատաց Աստուծոյ
դրկած լուրին: Ան ինիսուն տարեկան էր:





Աստուած ըսաւ Աբրահամի, որ ան ասկէ ետք
Աբրահամ պիտի կոչուի "փառաւորեալ հայր"
Եւ Սառան պիտի կոչուի Սառա "իշխանուհի":





Աստուած նաեւ ըսաւ
Աբրահամի, որ Ան պիտի
բնաջնջէ երկու չար
քաղաքները Սոդոմի եւ
Քոմորի: Աբրահամին
եղբօրորդին Լոդը
Սոդոմի մէջ կ'ապրէր
իւր ընտանիքին
հետ:




Լոդ Աստուծոյ
ագդարարութեան
հաւատաց, սակայն
իր աղջիկներուն
ամուսինները
մերժեցին
Սողոմը ձգել: Ի՞նչ
ողբերգութիւն:
Անոնք
չհաւատացին
Աստուծոյ
իօսքին:



Միայն Լոդ եւ իր երկու
աղջիկները փրկուեցան:
Կրակ եւ կայծակ իջաւ
չար քաղաքներուն վրայ:




Դժբախտաբար Լոդի կինը
Աստուծոյ ահազանգին
չենթարկուեցաւ եւ ետեւ
նայեցաւ վազած
ատենը: Ան աղէ
սին մը դարձաւ:



Աստուած իմ
խոստումը պահեց
Աբրահամի եւ
Սառայի: Անոնք
իրենց ծեր
տարիքին
զաւակ մը
ունեցան,
ինչպէս որ
Աստուած
ըսած էր:
Ինչքա՛ն
ուրախացան երբ
հասեցին ծնալ:



Թերեւս
Աբրահամ նաեւ
խորհեցաւ Աստուծոյ
խոստումին մասին,
որ յաւիտեան իրեն
եւ իր որդիներուն
պիտի տայ



Քանաաններու
հողերը:

Աստուած
պահեց այդ
խոստումն ալ
Աբրահամին:
Աստուած միշտ
իր խոստումները
կը պահէ:



Աստուծոյ խոստումը Աբրահամին

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 11-21

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ Գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

